ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY-VANADZOR

Open Society Foundations - Armenia
Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ԶԵԿՈՒՅՑ

2019 Թ. ՁՄԵՌԱՅԻՆ, 2020 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ, 2020 Թ. ՁՄԵՌԱՅԻՆ ԵՎ 2021Թ. ԱՄԱՌԱՅԻՆ
ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2021

Հեղինակային խումբ՝ Արմինե Սաղիկյան

Հայկ Հակոբյան

Նազելի Մովսեսյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են եւ հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԶՈՐԱԿՈՉԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ԿԱՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ 6

2019 Թ.-Ի ԶՄԵՌԱՅԻՆ, 2020 Թ-Ի ԱՄԱՌԱՅԻՆ, 2020 Թ-Ի ԶՄԵՌԱՅԻՆ ԵՎ 2021 Թ-Ի ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՄԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 18

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 28

ՀԱՎԵԼՎԱԾ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1998 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ը ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԱԶԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 34

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաեւ՝ Կազմակերպություն) զորակոչիկների իրավունքների պաշտպանությունը եւ զորակոչի գործընթացի նկատմամբ վերահսկողությունը դիտարկում է որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ապահովման եւ քաղաքացիական վերահսկողության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Կազմակերպությունը զորակոչի գործընթացի մոնիթորինգն իրականացնում է 2008 թվականից եւ մինչ օրս շարունակում է վերահսկողությունը այդ գործընթացի նկատմամբ: Կազմակերպությունը կարեւորում է զորակոչիկների խախտված իրավունքների վերականգնումը, այդ իսկ պատճառով իրականացնում է նաև զորակոչիկների իրավունքների եւ պարտականությունների շարունակական իրազեկում, մասնավորապես՝ պարտադիր ժամկետային ծառայության, վարժական հավաքի կամ զորահավաքի համար զորակոչի ենթակա քաղաքացիների ծանուցման, նրանց առողջական վիճակի հետազոտման, առողջական վիճակի վերաբերյալ բժշկական եզրակացությունների, պիտանիության վերաբերյալ որոշումների, բժշկական եւ այլ փաստաթղթերի տրամադրման հետ կապված պետական մարմինների գործողությունների, զորակոչիկների նկատմամբ վերաբերմունքի մասին, իրականացնում է օրենսդրական վերլուծություններ եւ պետական մարմիններին պարբերաբար ներկայացնում օրենսդրական փոփոխությունների եւ իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ առաջարկություններ:

Կազմակերպությունը ներկայացնում է 2019 թ.-ի ձմեռային, 2020 թ.-ի ամառային, 2020 թ.-ի ձմեռային և 2021 թ.-ի ամառային զորակոչերի (2019 թ. օգոստոսի 1-ից մինչև 2021 թ հուլիսի 31-ը ներառյալ) ժամանակահատվածում զորակոչիկների իրավունքների վիճակի մասին զեկույցը: Զեկույցին կից հավելվածում ներկայացված են նաեւ տեղեկություններ՝ 1998 թ.-ից մինչեւ 2021 թ. օգոստոսի 6-ը ՀՀ Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած եւ ազատված քաղաքացիների վերաբերյալ:

Զեկույցում ամփոփված տեղեկությունները ստացվել են ՀՀ տարբեր մարզերից, մասնավորապես՝ Լոռու (46 հոգի), Շիրակի (13 հոգի), Տավուշի (1 հոգի), Արագածոտնի (1 հոգի), Արմավիրի (4 հոգի), Կոտայքի (9 հոգի), Սյունիքի (2 հոգի), Վայոց Ձորի (1 հոգի) Գեղարքունիքի (1 հոգի) մարզերից, Երեւան քաղաքից (22 հոգի), արտերկրից (19 հոգի),

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

բնակության վայրը կոնկրետ չնշած վայրերից (37 հոգի) դիմած 156 քաղաքացիներից՝ զորակոչիկներից եւ նրանց հարազատներից, ինչպես նաեւ ՀՀ պաշտպանության նախարարությունից եւ այլ հաստատություններից կազմակերպության հարցումների միջոցով:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ԶՈՐԱԿՈՉԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ԿԱՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Զորակոչերի ընթացքում զորակոչի գործընթացը, զորակոչիկների բժշկական զննության անցկացումը, տարբեր հիմնավորումներով տարկետումից օգտվելու իրավունքը կարգավորող հիմնական իրավական ակտերն են.

- ***«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք***[1]
- 2021 թվականի ապրիլի 19-ին ընդունվել է «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-169-Ն օրենքը:[2]

Օրենքը լրացվել է 5.1 կետով, որով սահմանվում է. «Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ տրված տարկետման ժամկետի ավարտի օրվա դրությամբ միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառությունը չավարտած, ավարտական կուրսում սովորող և պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ մեկ անգամ տրվում է տարկետում՝ ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 20 տարին լրանալու օրը:

- 2021 թվականի ապրիլի 19-ին ընդունվել է «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-170-Ն օրենքը[3], որի

Հոդված 30-ում կատարվել է հետևյալ փոփոխությունը.

> կետ 3) նախկինում պայմանագրային զինվորական ծառայություն չանցած և մինչև 45 տարեկան (նախկինում գործող որոշմամբ՝ 40 տարեկան)՝ պահեստազորում հաշվառված արական սեռի քաղաքացիները և իգական

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131552
[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152087

[3] arlis.am/DocumentView.aspx?DocID=152084

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

սեռի քաղաքացիները՝ անկախ պահեստազորում հաշվառված լինելու հանգամանքից, ինչպես նաև պահեստազորի շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերում հաշվառված մինչև 50 տարեկան (նախկինում գործող որոշմամբ՝ 45 տարեկան) քաղաքացիները՝ զորամասային օղակում ծառայության նշանակվելու դեպքում։

Հոդված 57-ում կատարվել է հետևյալ փոփոխությունը.

Պահեստազորի խմբերը և պահեստազորում գտնվելու սահմանային տարիքը

Պահեստազորի առաջին խմբում հաշվառվում են՝

1) շարքային, կրտսեր ենթասպայական և ավագ ենթասպայական կազմերի պահեստազորայինները՝ մինչև 53 տարեկանը (նախկինում գործող որոշմամբ՝ 48 տարեկան).

2) կրտսեր սպայական կազմի պահեստազորայինները՝ մինչև 55 տարեկանը (նախկինում գործող որոշմամբ՝ 50 տարեկան).

3) ավագ սպայական կազմի «մայոր» և «փոխգնդապետ» զինվորական կոչումներ ունեցող պահեստազորայինները՝ մինչև 58 տարեկանը (նախկինում գործող որոշմամբ՝ 55 տարեկան).

4) ավագ սպայական կազմի «գնդապետ» զինվորական կոչում ունեցող պահեստազորայինները՝ մինչև 60 տարեկանը (նախկինում գործող որոշմամբ՝ 58 տարեկան).

3. Պահեստազորի երկրորդ խմբում հաշվառվում են՝

1) շարքային, կրտսեր ենթասպայական և ավագ ենթասպայական կազմերի պահեստազորայինները՝ մինչև 55 տարեկանը (նախկինում գործող որոշմամբ՝ 50 տարեկան).

2) կրտսեր սպայական կազմի պահեստազորայինները՝ մինչև 57 տարեկանը (նախկինում գործող որոշմամբ՝ 52 տարեկան).

3) ավագ սպայական կազմի «մայոր» և «փոխգնդապետ» զինվորական կոչումներ ունեցող պահեստազորայինները՝ մինչև 60 տարեկանը (նախկինում գործող որոշմամբ՝ 58 տարեկան).

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

4) ավագ սպայական կազմի «գնդապետ» զինվորական կոչում ունեցող պահեստազորայինները՝ մինչև 63 տարեկանը (նախկինում գործող որոշմամբ՝ 60 տարեկան).

- *2017 թվականի նոյեմբերի 15-ին ընդունված «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը*[4]

Ի դեպ, զորահավաքային զորակոչի եւ վարժական հավաքներին մասնակցելու ընթացքում առաջացել են մի շարք խնդիրներ՝ կապված թե զորահավաքի եւ վարժական հավաքների ենթակա անձանց շրջանակի համար որոշակի կարգավիճակից ելնելով արտոնությունների տրամադրման, թե պարտադիր բժշկական զննության իրականացման եւ թե զորահավաքի գործընթացի պատշաճ նախապատրաստություն ապահովելու հետ:

Բացի դրանից՝ օրենսդրական անհստակության պատճառով բազմաթիվ քաղաքացիներ ունեցել են խնդիրներ ռազմատրասնպորտային պարտականության շրջանակներում սեփականության իրավունքով իրենց պատկանող տրանսպորտային միջոցների ներգրավվման հետ կապված:

- *2018 թվականի ապրիլի 12-ի ՀՀ Կառավարության «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաեւ քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» 404 որոշումը*[5]

Հարկ է նշել, որ պարբերաբար անդրադարձել ենք զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկին եւ այն սահմանելու մասին որոշմանը, որը նախկինում սահմանվում էր ՀՀ ՊՆ հրամանով: Այնուհետեւ, 2018 թվականի ապրիլի 12-ին այդ ցանկը սահմանվեց ՀՀ Կառավարության որոշմամբ: Այնուամենայնիվ, բովանդակային առումով բավականին շատ մտահոգիչ հարցեր մնացին: 2020 թվականին e-draft իրավական ակտերի

4 https://www.arlis.am/documentview.aspx?docid=144772&fbclid=IwAR2YNtgZoGAzTsYzhgXysWK7v6hNuhTGc1WB_NBHvKtEI1EvVMVgrHDmnVY

5 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132970

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

նախագծերի հրապարակման միասնական կայքում 29.09.2020 - 15.10.2020 թթ. ժամանակահատվածում քննարկման ներկայացվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը[6], որն անհամեմատ բարելավված էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագիծը նախատեսում էր ավելի օբյեկտիվ ցուցանիշներ, որը հետագայում և՛ հանձնաժողովներին, և՛ տվյալ հարցերով զբաղվող կազմակերպություններին կոնկրետ ցուցանիշներով դիտարկման հնարավորություն կտար: Բացի դրանից՝ նախագծով ներդրվեցին նոր ու ժամանակակից չափելիության սանդղակներ, փորձեր, որոշ հետազոտություններ դարձել են պարտադիր, ինչի մասին Կազմակերպությունը բազմիցս առաջարկներ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարությանը: Գրեթե լուծված էր Հիվանդությունների միջազգային դասակարգմանը դրված ախտորոշումների համապատասխանեցման խնդիրը (ՀՄԴ): Այնուամենայնիվ դեռեւս որոշակի խնդիրներ մնացել էին անհստակ: Սակայն 2020 թ.-ի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողությունների պատճառով նախագծի քննարկում տեղի չունեցավ:

- ***«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 952-Ն որոշում***

ՀՀ Կառավարությունը 2019 թվականի հուլիսի 25-ի N 952-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» N 404-Ն որոշման մեջ կատարեց փոփոխություն եւ նախկինում սահմանափակումով պիտանի ճանաչվող թեթև աստիճանի մտավոր հետամնացությունը այլեւս համարվում է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար: Ընդ որում՝ այս որոշումը կայացվել է այն

[6] https://www.e-draft.am/projects/2774/about

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

բանից հետո, երբ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ վարչական դատարանում սկսել է վիճարկել «թեթև մտավոր հետնորմալություն» ախտորոշմամբ զինծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված և զորակոչված քաղաքացու վերաբերյալ ԿԲՀ որոշումը:[7]

Նշենք, որ ՀՀ Կառավարության 2019 թվականի հուլիսի 25-ի N 952-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունումից հետո ՀՀ ՊՆ ԿՌԲՀ-ը իրականացրել է որոշմամբ նախատեսված զինծառայողների փորձաքննություններ, որոնց արդյունքում ՀՀ զինված ուժերից վաղաժամկետ զորացրվել է 148 պարտադիր ժամկետային զինծառայող:

- ***ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման եւ բժշկական փորձաքննության, հետազոտման եւ փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում եւ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները եւ դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձեւերը, բժշկական հետազոտությունների եւ բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 405 որոշումը[8]:***

Չնայած որ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է քաղաքացիների տեղեկություններ ստանալու իրավունքը, սակայն ձեւավորված էր այնպիսի պրակտիկա, երբ զինվորական կոմիսարիատները զորակոչիկներին չէին տրամադրում զորակոչի նպատակով առողջական վիճակի հետազոտության վերաբերյալ փաստաթղթերի եւ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության պատճենները, որի պատճառով զորակոչիկները զրկվում էին իրենց առողջական վիճակի բժշկական հետազոտությունների վերաբերյալ ախտորոշումներն ու զինվորական ծառայության

[7] https://hcav.am/yurik-broyan-14-01-2018
[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121636

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

պիտանիության վերաբերյալ որոշումները բողոքարկելու հնարավորությունից: «Զինապարտության մասին» գործող օրենքը[9] չէր նախատեսում այդ տեղեկությունների պարտադիր տրամադրման կամ զորակոչիկի դիմումի հիման վրա ստանալու կարգ: Սակայն 2017 թ.-ին ընդունված **«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»** ՀՀ օրենքով[10] սահմանվեց, որ քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով արված եզրակացություններն ու այլ փաստաթղթեր, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը: Նշված նորմը հիմնականում փոխեց մարդու իրավունքները խախտող ձեւավորված պրակտիկան:

Նույն կերպ զորակոչիկներին նման տեղեկություններ եւ փաստաթղթեր չէին տրամադրում նաև քաղաքացիական բժշկական հաստատությունները: Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2018 թվականի N 405-Ն որոշմամբ[11] սահմանվեց, որ բուժհաստատությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ զորակոչիկի առողջական վիճակի, բժշկական հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

- Նշենք, որ նոր կորոնավիրուսային վարակի տարածման կանխարգելմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունում Կառավարության **2020 թ. մարտի 16-ի 298-Ն որոշմամբ** հայտարարված արտակարգ դրության պատճառով հանրությանը ժամանակին չի տրամադրվել որեւէ պաշտոնական տեղեկատվություն՝ հերթական զորակոչը և դրանով պայմանավորված՝ նախազորակոչային պատրաստության միջոցառումները, նախազորակոչային եւ զորակոչային տարիքի անձանց բժշկական փորձաքննությունը իրականացնելու

[9] https://www.arlis.am/documentview.aspx?docid=574
[10] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117633
[11] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151135

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

մասին: Միայն եղել է մեկ պաշտոնական տեղեկություն. 2020 թ. մարտի 18-ին պաշտպանության նախարարի մամուլի խոսնակը ֆեյսբուքյան գրառմամբ հայտնել է, որ ամառային զորակոչի անցկացման ժամկետներում փոփոխություններ չեն նախատեսվում:[12]

2020 թ. ապրիլի 1-ից զորակոչի ենթակա քաղաքացիները բուժզննություն անցնելու նպատակով ներկայանում են ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողով՝ համաձայն ՀՀ Կառավարության «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման եւ բժշկական փորձաքննության, հետազոտման եւ փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում եւ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները եւ դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների եւ բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու եւ ՀՀ Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 405-Ն որոշման: Այնուհետեւ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունները, նախքան զորակոչն սկսվելը, համաձայն զորակոչի ենթակա քաղաքացիների՝ տարածքային զինվորական կոմիսարիատի հետ ճշտված ցուցակների, զորակոչիկների բժշկական քարտերից քաղվածքները ներկայացնելու են զինվորական կոմիսարիատ՝ հետագա բժշկական հետազոտություններն իրականացնելու համար:

Հարկ է նշել, որ Կառավարության՝ 2020 թ. մարտի 16-ի 298-Ն որոշմամբ սահմանափակումներ են մտցվել առանձին հաստատություններում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում արգելվել են՝

1) հանձնուքներ, ծանրոցներ և փաթեթներ ստանալը և ուղարկելը.

2) տեսակցություններ ունենալը (բացառությամբ՝ տեսազանգից օգտվելու դեպքերի).

3) շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր զինծառայողների արձակուրդը:

[12] https://news.am/arm/news/566866.html

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Մինչ այդ՝ արդեն 2020 թ.-ի փետրվարի 25-ին, Զինված ուժերի ղեկավար կազմի խորհրդակցությունից հետո ԶՈՒ–ն անցել է խիստ հակահամաճարակային իրավիճակում գործելու ռեժիմի: Բոլոր զորամասերում բժշկական ծառայությունն անցել է ուժեղացված աշխատանքի: Զորամասերում արգելել են ժամկետային զինծառայողներին այցերը, ինչպես նաև նրանց արձակուրդի տրամադրումը:[13]

Բացի դրանից՝ նոր կորոնավիրուսային վարակի տարածման կանխարգելմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունում Կառավարության՝ **2020 թ. մարտի 16-ի 298-Ն որոշմամբ** հայտարարված արտակարգ դրության հետեւանքով սահմանների փակ լինելու, չվերթների բացակայության պատճառով արտերկրում գտնվող քաղաքացիները տարկետման ժամկետը լրանալուց հետո չեն կարողացել վերադառնալ Հայաստանի Հանրապետություն՝ ներկայանալու զինվորական կոմիսարիատ եւ անցնելու համապատասխան բուժզննություններ, եւ համապատասխան պետական մարմինները չեն իրազեկել զորակոչիկներին եւ համապատասխան դեսպանությունների միջոցով չեն ապահովել զորակոչիկ հանդիսացող քաղաքացիների վերադարձը: Կազմակերպության տվյալներով՝ արտակարգ դրության հետևանքով սահմանների փակ լինելու պատճառով զորակոչին չներկայացած առնվազն մեկ զորակոչիկի նկատմամբ քրեական գործ է հարուցվել, ներկայումս էլ ընթանում է նախաքննությունը: Զորակոչիկը չի կարողացել Չինաստանից վերադառնալ ՀՀ և մասնակցել 2020 թ. ամառային զորակոչին, զորակոչիկի ծնողները խնդրի մասին հայտնել են ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման ներկայացուցչին (նաև քննիչին), սակայն ամեն դեպքում անձնական գործն ուղարկվել է քննչական բաժին և հարուցվել է քրեական գործ:

- ***«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենք:***

[13] https://www.civilnet.am/news/2020/02/26/%D4%BF%D5%B8%D6%80%D5%B8%D5%B6%D5%A1%D5%BE%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%AE%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A3-%D5%8A%D5%86-%D5%B6-%D5%A1%D6%80%D5%A3%D5%A5%D5%AC%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D6%80%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%A6%D5%B8%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80-%D5%A1%D5%B5%D6%81%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8/377154

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Զորակոչի գործընթացին առնչվող կարեւոր իրավական ակտ է ***«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքը,***[14] որն ընդունվել է 2003 թ.-ին եւ ուժի մեջ մտել է 2004 թ.-ից: Այս օրենքը ընդունվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ շատ քաղաքացիներ արտերկրում են, ենթակա են զորակոչման, սակայն խուսափում են զինծառայությունից, որը քրեորեն պատժելի արարք է (ՀՀ Քր. օրենսգրքի 327 հոդվածը):

Նշված օրենքը 12 անգամ ենթարկվել է փոփոխությունների, որի արդյունքում երկարաձգվել է օրենքի գործողության ժամանակահատվածը և տարածվել է այդ ընթացքում «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայության չզորակոչված (զորակոչից խուսափած) ու 27 (պահեստազորի սպաները՝ 35) տարին լրացած կամ մինչև 27 (35) տարին լրանալը «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքեր ձեռք բերած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (անձանց) վրա: Օրենքի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ հետագա առաջարկությունները չեն ընդունվել, եւ օրենքի գործողության ժամկետը դադարել է 2019 թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո:

2020 թվականի պատերազմական գործողություններից հետո ՀՀ Կառավարությունը 2021 թ.-ի ապրիլի 9-ին հեղինակել է «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորահավաքային զորակոչից խուսափած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու» մասին օրենքը, ինչը ուժի մեջ մտավ 2021 թ.-ի մայիսի 19-ից: «Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից խուսափած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու մասին» օրենքը ենթադրում է, որ այն կկիրառվի 27 տարին լրացած շարքային և 35 տարին լրացած պահեստազորի սպայական կազմերի այն անձանց նկատմամբ, ովքեր խուսափել են պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից և կասկածվում, մեղադրվում կամ դատապարտվել են ՀՀ քրեական

14

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով (միայն եթե նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարվել է ռազմական դրության ժամանակ) սահմանված՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից խուսափելու հանցանք կատարելու մեջ[15]:

Օրենքի մշակման համար հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության տնտեսական, սոցիալական, հոգեւոր, մշակութային ոլորտներում զարգացման համար սեփական ավանդը ներդնելու համար հնարավորության ընձեռումը, հետպատերազմյան հետեւանքները հնարավորինս մեղմելու եւ դրանով իսկ Հայաստանի Հանրապետության կայուն զարգացումն ապահովելու տեսլականը[16]:

- ***2020 թ.-ի սեպտեմբերի 27-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» 1586 - Ն որոշում[17]***

ՀՀ Կառավարության 27 սեպտեմբերի 2020 թ. N 1586-Ն որոշման ընդունմամբ ՀՀ ամբողջ տարածքում հայտարարվել է ռազմական դրություն: ՀՀ-ում հայտարարվել է ընդհանուր զորահավաք և գործողության մեջ է դրվել զինված ուժերի կիրառման պլանը: Հայտարարվել է պահեստազորի սպայական, ենթասպայական և շարքային կազմի մինչև 55 տարեկան պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչ: Պահեստազորում հաշվառված քաղաքացիների զորահավաքային զորակոչն ապահովում է ՀՀ պաշտպանության նախարարը, իսկ գործընթացն իրականացնում են ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները (զինվորական կոմիսարիատները):

[15] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152705
[16] http://www.parliament.am/draft_history.php?id=12396&lang=arm
[17] https://www.e-gov.am/gov-decrees/item/34842/

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ **զորահավաքային զորակոչի,** պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու **ժամանակ իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն:** Սույն մասում նշված դեպքերում քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության կարգն իրականացվում է ՀՀ Կառավարության որոշմամբ (12 ապրիլի 2018 թ. N 405-Ն) սահմանված պահանջներին համապատասխան:

Թեև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ զորահավաքային զորակոչի ժամանակ ևս իրականացվում է զորակոչի ենթակա անձանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն, սակայն Կազմակերպություն դիմած բազմաթիվ քաղաքացիներ (զորահավաքային զորակոչի միջոցով զորակոչված անձինք կամ վերջիններիս հարազատներ) փաստել են, որ վերը նշված գործընթացն ուղեկցվում է մարդու իրավունքների էական խախտումներով: Մասնավորապես՝ քաղաքացիներն իրենց առողջական վիճակի վերաբերյալ գանգատներն ու խնդիրները փոխանցում են զինվորական կոմիսարիատների աշխատակիցներին, սակայն դրանք հաշվի չեն առնվել և դրանց վերաբերյալ առողջական վիճակի հետազոտություն և բժշկական փորձաքննություն չի իրականացվել: Արդյունքում զորակոչի ենթակա քաղաքացիներն, այլ ելք չունենալով, զորակոչվել են զորահավաքային ծառայության, որի ընթացքում նրանց առողջական խնդիրներն էլ ավելի են վատթարացել: Գրանցվել են դեպքեր, երբ զորակոչված քաղաքացու առողջական վիճակի վատթարացման հետևանքով վերջինս տեղափոխվել է ՀՀ ՊՆ զինվորական հոսպիտալ և ստացել բուժում կամ անհրաժեշտ բժշկական վերահսկողության բացակայության պայմաններում զորակոչված քաղաքացու առողջական վիճակը վատթարացել է զորակոչվելուց կարճ ժամանակ անց:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Միեւնույն ժամանակ պետք է փաստել, որ ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածով ամրագրված է, որ ռազմական դրության պայմաններում մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել, եւ կարելի է ենթադրել, որ պատերազմական իրավիճակը կարող է հանգեցնել նրան, որ ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներն ու բժշկական հանձնաժողովները զորահավաքի ենթակա քաղաքացիների մեծ քանակի դեպքում օբյեկտիվորեն կարող են զրկված լինել օրենսդրության պահանջների կատարումն ապահովելուց, սակայն, անընդունելի է, որ դա իրականացվի զորահավաքային զորակոչի ենթակա անձանց մարդու հիմնարար՝ առողջության պահպանման իրավունքի խախտումների հաշվին:

Հարկ ենք համարում նաեւ ընդգծել, որ ռազմական դրության ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020 թ. հոկտեմբերի 20-ին հայտարարություն տարածեց այն մասին, որ ժամանակավորապես դադարեցնում է զինծառայողների առողջական վիճակի վերաբերյալ դիմում-բողոքների ընդունումը. «ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացնում է, որ ժամանակավորապես դադարեցվում է զինծառայողների, զորահավաքով զորակոչվածների և կամավորականների կողմից առողջական վիճակի վերաբերյալ ԶՈՒ ռազմաբժշկական վարչություն ուղարկվող դիմում-բողոքների ընդունումը: Ռազմական դրության պայմաններում բոլոր զինծառայողների, այդ թվում՝ զորահավաքով զորակոչվածների և կամավորականների բուժսպասարկումը հավասարաչափ իրականացվում է՝ ԶՈՒ բուժ-տարհանիչ միջոցառումների ընդհանուր համակարգում, զորամասերում կամ տեղակայման վայրերում գործող կարգի համաձայն»:[18] Միեւնույն ժամանակ առողջական վիճակի վերաբերյալ դիմում-բողոքների դադարեցման հիմքերի և պատճառների մասին ՀՀ պաշտպանության նախարարությունը չի ներկայացրել որևէ հիմնավորում կամ բացատրություն:

Վերոգրյալից կարելի է ենթադրել, որ զինված ուժերում ծառայողների, այդ թվում՝ զորակոչիկների մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները չեն ապահովել՝ ըստ «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների ԵԱՀԿ վարքագծի կանոնների» 27-րդ կետի պահանջների, որի համաձայն՝ մասնակից պետություններից յուրաքանչյուրն

[18] https://mil.am/hy/news/8572

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ապահովում է, որ իր ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերում ծառայող անձնակազմի հավաքագրումն ու զինակոչը համահունչ լինեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում իր ստանձնած պարտավորություններին[19]:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ 1742 (2006) հանձնարարականի համաձայն՝ զինված ուժերը կառույց է, որը պատասխանատու է պետության և հասարակության պաշտպանության համար: Հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ զինված ուժերի անդամները համազգեստով քաղաքացիներ են, ովքեր, հաշվի առնելով զինվորական ծառայության սահմանափակումները, ունեն նույն իրավունքները և ազատությունները և դրանց պաշտպանության իրավունքը, ինչպես մյուս քաղաքացիները[20]:

Բացի դրանից՝ զինծառայողների առողջական վիճակի վերաբերյալ դիմում-բողոքների ընդունման դադարեցման վերաբերյալ ՊՆ հայտարարությունն ինքնին խախտում է նաև իրավական որոշակիության սկզբունքի պահանջները, քանի որ նշված հարցը՝ որպես սահմանափակում, կարգավորված չէ օրենքով, մյուս կողմից էլ զորակոչվող անձի համար հասկանալի չէ, թե նման սահմանափակման դեպքում վերջինս ինչպիսի վարք պետք է դրսևորի:

2019 Թ.-Ի ՁՄԵՌԱՅԻՆ, 2020 Թ.-Ի ԱՄԱՌԱՅԻՆ, 2020 Թ.-Ի ՁՄԵՌԱՅԻՆ ԵՎ 2021 Թ.-Ի ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՄԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2019 թ.-ի ձմեռային, 2020 թ.-ի ամառային, 2020 թ.-ի ձմեռային և 2021 թ.-ի ամառային զորակոչերի ընթացքում (2019 թ. օգոստոսի 1-ից մինչև 2021 թ. հուլիսի 31-ը ներառյալ) ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել **307** անձ, որոնցից **156-ը զորակոչի գործընթացին առնչվող հարցերով:**

[19] https://www.osce.org/hy/forum-for-security-cooperation/74974?download=true
[20] http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17424&lang=en

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

156 անձանցից 117-ը եղել են զորակոչիկներ, 17-ը՝ սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած անձինք, **22-ը՝ նախազորակոչային տարիքի զինվորական** հաշվառման ենթակա անձինք:

Հարկ ենք համարում ընդգծել, որ վերջին երկու զորակոչերին՝ 2020 թ.-ի ձմեռային և 2021 թ.-ի ամառային զորակոչերին դիմել են ավելի քիչ թվով զորակոչիկներ՝ պայմանավորված պատերազմական գործողություններով եւ հետպատերազմական իրավիճակով:

Նշենք, որ նախորդ չորս՝ 2017 թ. ձմեռային, 2018 թ. ամառային, 2018 թ. ձմեռային եւ 2019 թ. ամառային զորակոչերի ընթացքում **զորակոչի գործընթացին առնչվող հարցերով դիմել է 202 անձ՝ 180-ը՝ զորակոչիկ**, **9-ը՝** սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած անձինք եւ **13-ը՝ նախազորակոչային տարիքի զինվորական** հաշվառման ենթակա անձ:[21]

2019 թ.-ի ձմեռային, 2020 թ.-ի ամառային, 2020 թ.-ի ձմեռային եւ և 2021 թ.-ի ամառային զորակոչերի ընթացքում Կազմակերպություն դիմած **զորակոչիկների** մեծ մասի՝ 81 հոգու (52%) և **զինվորական հաշվառման ենթակա անձանցից** 8-ի (52%) խնդիրը վերաբերել է առողջական վիճակի ոչ պատշաճ բժշկական զննության եւ փորձաքննության իրականացման անհրաժեշտությանը, ինչպես նաեւ բժշկական եզրակացության հետ համաձայն չլինելու հետ:

9 **զորակոչիկ** (13 %) և 8 **զինվորական հաշվառման ենթակա անձ** (13 %) դիմել է «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված տարկետման եւ ազատման հիմքերի (ընտանեկան դրության բերումով, առողջական վիճակի պատճառով եւ ուսումը շարունակելու համար), ինչպես նաեւ օրենքով սահմանված իրենց իրավունքների վերաբերյալ հարցերով:

5-ական զորակոչիկ (մոտ 4 %) և **զինվորական հաշվառման ենթակա անձ** (23 %) դիմել է երկքաղաքացիության դեպքում Հայաստանի Հանրապետությունում զինծառայություն անցնելու ընթացակարգերի, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացի լինելու եւ միաժամանակ այլ երկրում զինծառայություն անցնելու եւ Հայաստանի

[21] https://drive.google.com/file/d/1Alf5ou27JMQbMWLlwk5_0G11-9fluz3M/view

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Հանրապետությունում զինծառայությունից ազատվելու կարգավորումներին առնչվող հարցերով:

17 հոգի (ավելի քան 10 %-ը) դիմել է սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայությունից խուսափելու հետ կապված ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն եւ իրավական աջակցություն ստանալու հարցով:

Մյուսների խնդիրները՝ մոտ 15%-ը, կապված են եղել այլ հարցերի եւ իրավական ընթացակարգերի պարզաբանման հետ, ինչը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Ի դեպ, նշված զորակոչերի ընթացքում արձանագրված խնդիրների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացվել են՝ **«Զորակոչիկների և վաղաժամ զորացրված զինծառայողների հետ կապված գործերով ՀՀ իրավասու պետական մարմինների վարքագիծը՝ ըստ մարդու իրավունքների սկզբունքների հանդեպ հարգանքի տեղեկանքում»:** [22]

Աղյուսակ 1. Կազմակերպություն դիմած զորակոչիկների եւ զինվորական հաշվառման ենթակա անձանց խնդիրներն ըստ յուրաքանչյուր զորակոչի[23]

Խնդրի նկարագրություն	2019 թ. ձմեռային զորակոչ			2020 թ. ամառային զորակոչ			2020 թ. ձմեռային զորակոչ			2021 թ. ամառային զորակոչ			Ընդամենը		
	Զորակոչիկ	Զինհաշվ. 2 վ. ենթ. անձ	Սահմկակիգի խախտմ զինծ. չանցածքաղաքացի	Զորակոչիկ	Զինհաշվ. ենթ. Անձ	Սահմկակիգի խախտմ զինծ. չանցածքաղաք	Զորակոչիկ	Զինհաշվ. ենթ. անձ	Սահմկակիգի խախտմ զինծ. չանցածքաղաքացի	Զորակոչիկ	Զինհաշվ. ենթ. անձ	Սահմկակիգի խախտմ զինծ. չանցածքաղաք	Զորակոչիկ	Զինհաշվ. ենթ. անձ	Սահմկակիգի խախտմ զինծ. չանցածքաղաք

[22] https://hcav.am/hcav-report-6-10-2021/

[23] ***Հարկ է նշել, որ մեկ անձը կարող է դիմած լինել մի քանի խնդրով:***

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

						ացի						**ացի**			**ացի**
Առողջական խնդիրներ /ոչ պատշաճ բժշկական օգնություն ստանալու, առողջական վիճակի զննության արդյունքների հետ անհամաձայնություն	18	4		37	2		11			15	2		**81**	**8**	**0**
Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն /ուսման հիմքով, ընտանեկան պայմաններից ելնելով/	2	1		6	4		1	2			1		**9**	**8**	**0**
«Սահմանված կարգի խախտմամբ զինծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթների եւ ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն			9			3						5	**0**	**0**	**17**
«Քաղաքացիության մասին» եւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքների դրույթների վերաբերյալ խորհրդատվություն	2	2		3	1			2					**5**	**5**	**0**
ԼԳԲՏ համայնքի անձանց զինապարտության մասին իրավական ընթացակարգերի եւ պրակտիկայի վերաբերյալ խորհրդատվություն	1			5			2			1			**9**	**0**	**0**
Ուսումը արտերկրում ավարտելու նպատակով անձնագրում օտարերկրյա պետությունում վավերականության ժամկետի մասին համապատասխան նշում կատարելու վերաբերյալ խորհրդատվություն										2			**2**	**0**	**0**
Զորակոչիկների բուժզննությունների կարգի / վերազննման ներկայանալու վերաբերյալ խորհրդատվություն	2												**2**	**0**	**0**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Կորոնավիրուսային վարակի պատճառով արտերկրից ՀՀ վերադառնալու հնարավորության վերաբերյալ խորհրդատվություն				2									**2**	**0**	**0**
Զորակոչվող բժիշկ-սպաների առողջական խնդիրներով որպես սպա ներգրավվելու համապատասխանության վերաբերյալ	1												**1**	**0**	**0**
Զորակոչին առնչվող ՀՀ կառավարության որոշումներով պայմանավորված խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն / ՀՀ կառավարության 404-Ն որոշման դրույթների վերաբերյալ խորհրդատվություն	1												**1**	**0**	**0**
Բուժզննության նպատակով այլ բնակավայր մեկնելու համար նախատեսված տրանսպորտային ծախսի փոխհատուցումների վերաբերյալ խորհրդատվություն				2									**2**	**0**	**0**
Պատիվ ունեմ ծրագրով կրթությունը շարունակելու համար տարկետման իրավունք ունենալու եւ ԲՈՒՀ-ից դուրս մնալու դեպքում պարտադիր զինվորական ծառայություն անցնելու իրավաչափությանը եւ ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն				2									**2**	**0**	**0**
Միաժամանակ զորակոչվող եղբայրների միեւնույն զորամասում ծառայելու հնարավորության վերաբերյալ խորհրդատվություն	1												**1**	**0**	**0**
Զինվորական հաշվառման կանգնելու ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն				1			2						**3**	**0**	**0**
Պարտադիր զինծառայությունից առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված անձանց՝ ԲՈՒՀ-ում սովորելու ընթացքում ռազմական պատրաստություն անցնելու իրավաչափության վերաբերյալ խորհրդատվություն							1						**1**	**0**	**0**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Զորակոչային տարիքից շուտ առողջական վիճակի հետազոտման եւ բժշկական փորձաքննության ենթարկվելու հնարավորության վերաբերյալ խորհրդատվություն								1					**0**	**1**	**0**
Զորակոչի ոչ պատշաճ կազմակերպման վերաբերյալ										1			**1**	**0**	**0**
Մարտական գործողությունների ժամանակ զոհվածի եղբոր զինապարտության վերաբերյալ խորհրդատվություն							1						**1**	**0**	**0**
Ընդամենը	**28**	**7**	**9**	**58**	**7**	**3**	**18**	**5**	**0**	**19**	**3**	**5**	**123**	**22**	**17**

2019 թ.-ի ձմեռային, 2020 թ.-ի ամառային, 2020 թ.-ի ձմեռային եւ 2021 թ.-ի ամառային զորակոչերի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած բոլոր անձանց տրամադրվել է բանավոր խորհրդատվություն:

19 զորակոչիկի, բացի բանավոր աջակցությունից, տրամադրվել է նաեւ գրավոր իրավական աջակցություն (տե՛ս աղյուսակ 2): Նշված 19 զորակոչիկներից 14-ը դիմել են առողջական խնդիրներով, 2-ի խնդիրը վերաբերել է ընտանեկան դրությունից ելնելով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից օգտվելու հնարավորությանը, 2-ի խնդիրը՝ ուսումը արտերկրում ավարտելու նպատակով անձնագրում օտարերկրյա պետությունում վավերականության ժամկետի մասին համապատասխան նշում կատարելուն, 1 զորակոչիկի խնդիր վերաբերել է բուժզննության նպատակով այլ բնակավայր մեկնելու համար նախատեսված տրանսպորտային ծախսի փոխհատուցումներին (կորոնավիրուսային համավարակի պայմաններում):

Աղյուսակ 2. Իրավական աջակցության տրամադրման ընթացակարգը

Իրավական աջակցության տրամադրման ընթացակարգը	**2019 ձմեռային զորակոչ**	**2020 ամառային զորակոչ**	**2020 ձմեռային զորակոչ**	**2021 ամառային զորակոչ**	**Ընդամենը**
Գրավոր	2	9	3		**14**
Բանավոր	41	55	19	28	**142**
Ընդամենը	**43**	**63**	**22**	**28**	**156**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Բացի նշված գրություններից՝ Կազմակերպության աջակցությամբ 5 զորակոչիկի անունից կազմվել են դիմումներ՝ ուղղված Կենտրոնական բժշկական հանձնաժողով կամ ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն:

Կազմակերպության կողմից գրավոր աջակցության շրջանակներում ուղարկված գրություններին տրամադրված պատասխանների ժամկետները [24]

2019 թ. ձմեռային - 2021 թ. ամառային զորակոչերի ընթացքում դիմած զորակոչիկներից 14-ի խնդրով գրավոր իրավական աջակցության շրջանակներում Կազմակերպությունը ՀՀ պաշտպանության նախարարություն ուղարկել է ընդհանուր առմամբ 16 գրություն:

Պատասխան գրության ժամկետը	Ժամանակին		Ուշացումով		Ընդամենը
	Ըստ էության	Ոչ ըստ էության	Ըստ էության	Ոչ ըստ էության	
Ուղարկված գրությունների թիվը	5	6	2	3	**16**

Բացի նշվածից՝ գրավոր իրավական աջակցություն է ցուցաբերվել եւս 3 անձի՝ ՀՀ ՊՆ, զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն և ՄԻԲՍ բժշկական կենտրոն՝ փաստաբանական հարցումների միջոցով:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրավական աջակցության արդյունքները

Իրավական աջակցության արդյունքում վերնշյալ զորակոչերի ժամանակահատվածում զորակոչիկներից.

- ***7 հոգի ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար եւ ազատվել զինվորական ծառայությունից,*** *ընդ որում՝ նրանցից 1-ը, որ ԿԲՀ որոշմամբ զինծառայության համար պիտանի էր ճանաչվել, սեփական նախաձեռնությամբ*

[24] Ի դեպ, Կազմակերպությունը «ՀՀ պաշտպանության նախարարության վարքագիծը՝ տեղեկությունների տրամադրման հարցում» տեղեկանքով անդրադարձել է ՀՀ ՊՆ վարքագծին՝ տեղեկություններ տրամադրելու հարցում՝ https://hcav.am/pn-gaghtniutyun/

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

իրականացված բուժզննության արդյունքները ԿԲՀ-ին ներկայացնելուց հետո չի զորակոչվել, այլ որոշում է կայացվել՝ վերջինիս հաջորդ զորակոչին լրացուցիչ զննության ենթարկելու մասին, ինչի արդյունքում զորակոչիկն ազատվել է զինծառայությունից,

- ***4 հոգի ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար*** *(տրամադրվել է տարկետում 3 տարի ժամկետով),*
- ***12 հոգու առողջական խնդիրների առկայության պատճառով տրամադրվել է տարկետում, որից 8 հոգու՝ 6 ամիս ժամկետով, 4 հոգու՝ մինչեւ 1 տարի ժամկետով (10 ամսով),***
- ***1 հոգի Կազմակերպության պահանջով ուղեգրվել է լրացուցիչ հետազոտությունների[25],***
- ***1 զորակոչիկի տրանսպորտային հարցը կարգավորվել է Կազմակերպության կողմից դիմում ուղարկելուց անմիջապես հետո (կորոնավիրուսային համավարակի պայմաններում շուրջ 1 ամիս հանրային տրանսպորտի չգործելուց հետո այն վերսկսել է աշխատանքը),***
- ***1 հոգի դիմումի հիման վրա զորակոչվել է զինծառայության նույն զորամասում, որտեղ ծառայություն է իրականացնում նրա եղբայրը:***

2019 թ.-ի ձմեռային, 2020 թ.-ի ամառային, 2020 թ.-ի ձմեռային եւ 2021 թ.-ի ամառային զորակոչերի ընթացքում Կազմակերպությունը շարունակել է 2019 թ. ամառային զորակոչին եւ դրանից առաջ դիմած 25 զորակոչիկների իրավական պաշտպանությանն ուղղված գործողությունները:

2019 թ.-ի ձմեռային, 2020 թ.-ի ամառային, 2020 թ.-ի ձմեռային եւ 2021 թ.-ի ամառային զորակոչերի ընթացքում Կազմակերպությունը շարունակել է իրավական աջակցություն տրամադրել 2019 թ. ամառային զորակոչին եւ դրանից առաջ դիմած բոլոր 25 զորակոչիկներին, որոնց իրավական խնդիրը կապված է եղել առողջական վիճակի հետազոտության արդյունքների բողոքարկման հետ: Նրանք Կազմակերպության աջակցությամբ բողոքարկել են իրենց պիտանիության մասին որոշման օրինականությունը՝ ըստ վերադասության կամ դատական կարգով:

[25] Այն դեպքում, երբ լրացուցիչ զննություններից հետո զորակոչիկները ճանաչվում են ոչ պիտանի զինծառայության համար կամ վերջիններիս տրամադրվում է տարկետում, ներկայացվում է նշված վերջնական արդյունքը

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Որպես զորակոչիկների իրավունքների պաշտպանության միջոց՝ Կազմակերպությունը շարունակել է բողոքարկել զորակոչիկների վերաբերյալ կայացվող որոշումները եւ այդ համատեքստում **դատական կարգով բողոքարկվել է 9**, իսկ **վերադասության կարգով՝ 6** զորակոչիկների գործերը:

Նախկինում՝ 2019 թ. ամառային զորակոչին եւ դրանից առաջ դիմած **25 զորակոչիկներից.**

- **9-ի** գործով կայացված ԿԲՀ որոշումը բողոքարկվել է **դատական** կարգով, ընդ որում՝ նրանցից 1-ի գործով պահանջ է ներկայացվել՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետման տրամադրման մասին:
- **6**-ի գործով կայացված ԿԲՀ որոշումը բողոքարկվել է **վերադասության** կարգով:
- նախկինում դիմած 3 զորակոչիկների գործերը, ովքեր, չհամաձայնելով առողջական վիճակի զննության արդյունքների հետ, չեն զորակոչվել զինծառայության, գտնվում են մինչդատական վարույթում, այսինքն՝ վերջիններիս նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում գրավոր բողոքարկման անհրաժեշտություն դեռեւս չի առաջացել: Վերջիններիս այժմ հարուցված քրեական գործերի շրջանակներում տրամադրվում է բանավոր իրավական աջակցություն:
- մյուս **7** զորակոչիկներին, ովքեր նախկինում տարկետում են ստացել կամ ազատվել են զինծառայությունից, Կազմակերպության կողմից պարբերաբար տրամադրվել է բանավոր իրավական աջակցություն 2019 թ.-ի ձմեռային, 2020 թ.-ի ամառային եւ 2020 թ.-ի ձմեռային զորակոչերի ընթացքում:

Նախկինում դիմած եւ նշված ժամանակահատվածում **Կազմակերպության կողմից բանավոր կամ գրավոր, ինչպես նաեւ դատական կարգով** իրավական աջակցություն ստացած զորակոչիկներից.

- **8-ը** ճանաչվել են ոչ պիտանի զինծառայության համար,
- **5 զորակոչիկ** ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինծառայության համար եւ տրամադրել է տարկետում 3 տարի ժամկետով,
- **1 զորակոչիկի** տրամադրվել է տարկետում 1 տարի ժամկետով:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

- **1 զորակոչիկ,** որի՝ առողջական խնդիրներով զինծառայությանը պիտանի ճանաչվելու գործով Կազմակերպությունը զբաղվել է 2016 թ.-ից, 2020 թ. տրամադրվել է տարկետում՝ ընտանեկան պայմաններից ելնելով՝ երկրորդ երեխայի ծնունդով պայմանավորված:
- **1 զորակոչիկ,** որը սեփական դիմումի հիման վրա դատական բողոքարկման ընթացքում զորակոչվել է զինվորական ծառայության, զորակոչվելուց մեկ տարի անց առողջական վիճակի պատճառով վաղաժամ զորացրվել է:
- **սպայական կազմի 1 բժիշկ-մասնագետի** գործով բավարարվել է Կազմակերպության պահանջը՝ անվավեր է ճանաչվել զորակոչին «բուժծառայության լեյտենանտ» սպայական կոչում շնորհելու մասին ՀՀ ՊՆ հրամանը: Հետագայում դատարանի վճիռը ՀՀ ՊՆ կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան: Վերաքննիչ դատարանը մերժել է ՀՀ պաշտպանության նախարարության բողոքը, եւ որոշումը մտել է օրինական ուժի մեջ:
- 3 զորակոչիկների պիտանիության վերաբերյալ կայացված ԿԲՀ որոշումների դատական կարգով բողոքարկման գործերն ընթացքի մեջ են:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կան խնդիրներ, որոնք շարունակում են կրկնվել յուրաքանչյուր զորակոչի ժամանակ, կրում են պարբերական բնույթ եւ մինչ օրս լուծված չեն եւ անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական եւ իրավակիրառ պրակտիկայի փոփոխություն, ներկայացնում ենք համապատասխան առաջարկություններ.

1. **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին.** պարտադիր զինվորական ծառայության զորակոչին, տվյալ ժամանակահատվածում հայտարարված վարժական հավաքներին զորակոչիկների ներկայությունն ապահովելու նպատակով, հաշվի առնելով կորոնավիրուսային համավարակի կանխարգելման համար միջոցառումների ապահովման անհրաժեշտությունը, սահմանել զինկոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին էլեկտրոնային եղանակով ծանուցման կարգը, այդ թվում՝ ներկայանալու հստակ և ողջամիտ ժամկետները:
2. **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**. բացառել զորակոչիկի առողջական վիճակի զննության վերաբերյալ անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև ԿԲՀ որոշումների օրինակների տրամադրման մերժման դեպքերը:
3. **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**. զինծառայությանը պիտանի ճանաչելու որոշման հետ համաձայն չլինելու եւ ստորաբաժանում չներկայանալու դեպքում բացառել ստիպողաբար ներկայանալու դեպքերը, առավել եւս, եթե զորակոչիկը արդեն իսկ ներկայացել և հրաժարվել է զորակոչվել զինվորական ծառայության:
4. **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**. ապահովել բոլոր զորակոչիկների անձի գաղտնիության իրավունքի պաշտպանությունը, հատկապես՝ բժշկական զննության իրականացման ընթացքում:
5. **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**. բացառել զորակոչի ընթացքում բժշկական հետազոտություն անցնելու համար երկար ժամանակով սպասեցնելու արատավոր պրակտիկան եւ

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

սահմանել օրվա ընթացքում առողջական վիճակի հետազոտություն անցնող զորակոչիկների առավելագույն թվաքանակը եւ ժամանակացույցը: Քանի որ դեռեւս հաղթահարված չէ համավարակը, դրանով պայմանավորված՝ ապահովել բոլոր պաշտպանիչ և կանխարգելիչ պատշաճ միջոցառումները, այդ թվում՝ անհրաժեշտ սոցիալական եւ ֆիզիկական հեռավորության պահպանումը:

6. **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**. հայտարարված զորահավաքի շրջանակներում պահեստազորային զինծառայողներին զորակոչելիս իրականացնել պատշաճ, օբյեկտիվ բժշկական զննություն եւ փորձաքննություն:
7. **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**. հայտարարված զորահավաքի շրջանակներում պահեստազորային զինծառայողներին և կամավորագրված անձանց զորակոչելիս նրանց համար կազմակերպել պատշաճ զորավարժություններ՝ մինչ ռազմական գործողությունների գոտի/ առաջնագիծ ուղարկելը:
8. **ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին**. հայտարարված զորահավաքի շրջանակներում պահեստազորային զինծառայողներին զորակոչելիս հաշվի առնել նրանց զինվորական մասնագիտությունը:
9. **Բժշկական հաստատություններին.** զորակոչիկներին ենթարկել համալիր հետազոտությունների՝ նրանց իրական վիճակը բացահայտելու համար: Միեւնույն ժամանակ տրամադրել նրանց առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերի օրինակները:
10. **Բժշկական հաստատություններին.** պետության կողմից տրամադրվող անվճար բուժօգնության շրջանակներում իրականացնել **արդյունավետ եւ որակյալ** անվճար բժշկական միջոցառումներ՝ ներառյալ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա եւ այլ լաբորատոր կամ գործիքային հետազոտություններ, որոնք կապահովեն զորակոչիկների առողջական խնդիրների բացահայտման արդյունավետությունը:
11. **Քաղաքացիական բժշկական հաստատություններին.** ապահովել համավարակով պայմանավորված օբյեկտիվ խոչընդոտների հաղթահարումը՝ պայմանագրային զինծառայություն անցնողների բուժզննության կազմակերպման ընթացքում:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

12. **ՀՀ պաշտպանության նախարարությանը.** տեղեկատվական հարցումների պատասխանները տրամադրել օրենքով սահմանված ժամկետներում եւ անդրադառնալ դրանցում բարձրաձայնված խնդիրներին՝ ըստ էության:
13. **Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին.** բժշկական փորձաքննություն իրականացնելիս ապահովել անձի առողջական վիճակի գաղտնիության իրավունքը:
14. **Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին.** մի քանի առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկի բժշկական զննությունը իրականացնել բոլոր խնդիրներով եւ առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնել առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ՝ անկախ մեկ խնդրով պիտանիության վերաբերյալ որոշումից եւ անկախ այն հանգամանքից, թե երբ է առաջացել առողջական խնդիրը:
15. **Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին.** բացառել զորակոչիկների կողմից գանգատներ չարձանագրելու պրակտիկան: Անկախ այդ գանգատների հետագա հետազոտման արդյունքներից՝ դրանք պատշաճ արձանագրել անձի առողջական վիճակի հետազոտման ակտերում:
16. **Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին.** հաշվի առնել սեզոնային հիվանդությունների բնույթը եւ առանձնահատկությունները, եւ միայն դրա հիման վրա կայացնել համապատասխան որոշում:
17. **Կենտրոնական բժշկական հանձնաժողովին.** տրամադրել հիմնավորված եզրակացություններ, եթե դրանք տարբերվում են զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ ակտերով հաստատված ախտորոշումներից:
18. **Կենտրոնական բժշկական հանձնաժողովին.** միմյանցից էականորեն տարբերվող հիվանդությունների կամ հիվանդությունները սահմանող հոդվածների կիրառման դեպքում կայացնել հիմնավորված որոշում:
19. **Կենտրոնական բժշկական հանձնաժողովին՝** քաղաքացիներին առաջարկել այն վիրահատությունները, որոնց դեպքում պարտավոր են առաջարկել եւ ապահովել, ըստ հիվանդությունների, մինչ զորակոչը վիրահատական ցուցումների առկայության եւ դրանից չհրաժարվելու դեպքում զորակոչիկների վիրահատությունը:
20. **Կենտրոնական բժշկական հանձնաժողովին.** ապահովել բոլոր անհրաժեշտ հետազոտությունների համար նախատեսված ուղեգիր՝ զորակոչիկի պիտանիության վերաբերյալ ճիշտ եւ իրական որոշում կայացնելու համար:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

21. **Կենտրոնական բժշկական հանձնաժողովին.** հաշվի առնել առանձին հիվանդությունների «սեզոնային» բնույթը, օրինակ՝ «անգիոտրոֆոնևրոզ» հիվանդությունը, եւ հետազոտություններն ու փորձաքննությունը կազմակերպել ձմեռային զորակոչի ընթացքում: Ի դեպ՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովն ունի «մինչև մեկ տարի» ժամկետով տարկետում տրամադրելու հայեցողություն, և հաշվի առնելով, որ նշված հիվանդությունն առավել արտահայտվում է ցուրտ եղանակին, ապա հիվանդության իրական պատկերը բացահայտելու համար ապահովել նման հիվանդությունների առկայության մասին բժշկական հետազոտությունը դրանց սրման ժամանակահատվածում:
22. **Զորակոչը կազմակերպող և իրականացնող իրավասու մարմինների** ընդունած որոշումների, գործողության կամ անգործության դեմ բերված բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում պատշաճ քննարկման առարկա դարձնել բողոքի փաստական և իրավական հիմքերը, բողոքի քննարկման արդյունքներով ընդունել փաստարկված և պատճառաբանված որոշում:
23. Պարտադիր զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելու դեպքի առթիվ հարուցված **քրեական գործերի** վերաբերյալ՝
    - հաշվի առնել, որ անձը, օգտվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և իրավական այլ ակտերով երաշխավորված հիմնարար իրավունքներից, փորձելով պարզել վարչական մարմնի կողմից դրսևորած վարչարարության իրավաչափությունը, վիճարկում է իրեն պարտադիր զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչելու մասին որոշումը, և անձի արարքին քրեաիրավական գնահատական տալ միայն վարչական ակտի, գործողության կամ անգործության վիճարկման արդյունքում ընդունված վերջնական փաստաթղթի (դատական ակտ, վարչական մարմնի որոշում և այլ) անբողոքարկելի դառնալուց հետո,
    - վերը նշված հանգամանքը հաշվի առնել նաև քրեական գործերի դատական քննության ընթացքում,
    - նախաքննության ընթացքում դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու փոխարեն նշանակել դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննություն,

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

- նախաքննության ընթացքում հայտարարված հերթական զորակոչի ընթացքում զորակոչիկի անձնական գործը չուղարկել և զորակոչիկին չհորդորել ներկայանալ ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում՝ զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի լինելու մասին հարցը կրկին պարզելու, և այդ հանգամանքով պայմանավորված՝ չձգձգել նախաքննության ընթացքը:

24. **Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ**

- **ՀՀ Կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովներին, ՀՀ ԱԺ պատգամավորներին.** «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վերադարձնել օրակարգ:
- **ՀՀ Կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովներին, ՀՀ ԱԺ պատգամավորներին.** Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելիս սահմանել միաժամանակ երկու եւ ավելի հիվանդությունների առկայության դեպքում անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը, եւ հրաժարվել առանձին հիվանդությունների գնահատման հիման վրա զորակոչիկների պիտանիության մասին որոշում կայացնելու մոտեցումից:
- **ՀՀ Կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովներին, ՀՀ ԱԺ պատգամավորներին.** Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելիս հիմնավորել զինվորական ծառայությունից կոնկրետ հինգ հիվանդության առկայությամբ տարկետում սահմանելու տրամաբանությունը:
- **ՀՀ Կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովներին, ՀՀ ԱԺ պատգամավորներին.** վերանայել «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կատեգորիայի անձանց շրջանակը, մասնավորապես:
    - Ընտանեկան պայմաններից ելնելով (անչափահաս երեխա/ներ ունեցող ծնողների զորակոչի դեպքում, նույն ընտանիքից միաժամանակ մեկից ավելի անձանց զորակոչի դեպքում, ընտանիքի միակ կերակրողը հանդիսանալու դեպքում, հաշմանդամություն ունեցող ծնող/ների դեպքում եւ այլն)

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

- **ՀՀ Կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովներին, ՀՀ ԱԺ պատգամավորներին.** հստակ սահմանել «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված ռազմատրասնպորտային պարտականության շրջանակներում քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների ներգրավման կարգը:
- **ՀՀ Կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովներին, ՀՀ ԱԺ պատգամավորներին.** առանձին սահմանել զորահավաքային զորակոչի իրականացման կարգը, ինչպես, օրինակ, սահմանված է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի դեպքում:
- **ՀՀ Կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովներին, ՀՀ ԱԺ պատգամավորներին.** պարտադիր զինվորական ծառայության հերթական զորակոչի ընթացքում ընդունված վարչական ակտերի, գործողության կամ անգործության դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերով օրենքով ամրագրել վարչական գործերի քննության և դրա շրջանակներում նշանակված դատաբժշկական փորձաքննությունների կատարման այնպիսի ժամկետներ, որը հնարավորություն կընձեռի դատարանի որոշումն ունենալ մինչև զորակոչի ավարտը, ինչպես, օրինակ, սահմանված է ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀԱՎԵԼՎԱԾ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1998 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ը ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԱԶԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ուսումնասիրել է 1998 թ.-ից մինչեւ 2021 թ. օգոստոսի 6-ը[26] ՀՀ Կառավարության ընդունած որոշումները, որոնց հիման վրա առանձին քաղաքացիների տրամադրվում է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կամ ազատում տարբեր հիմքերով:

Քաղաքացիներին Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման տրամադրման մասին որոշում է կայացվում՝ համաձայն 2017 թ. նոյեմբերի 17-ի «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի[27] 21-րդ և 22-րդ հոդվածների 5-րդ կետի, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն, N 451-Ն, N 457-Ն որոշումների:

Մասնավորապես՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ***21-րդ հոդվածի 5-րդ կետով*** սահմանվում է՝ « …քաղաքացին կարող է **բացառիկ դեպքերում ազատվել** պարտադիր զինվորական ծառայությունից՝ ՀՀ Կառավարության որոշմամբ՝ ՀՀ Կառավարության սահմանած կարգով»:

Նշված օրենքի ***22-րդ հոդվածի 5-րդ կետով*** սահմանվում է, որ «…***Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում*** նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից **տարկետում կարող է տրվել նաև ՀՀ Կառավարության որոշմամբ**՝ ՀՀ Կառավարության սահմանած կարգով և պայմաններով»:

ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի ***N 450-Ն*** որոշման համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ***տարկետում է տրամադրվում սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին[28]:***

[26] 2021 թ ամառային զորակոչի ընթացքն ընդգրկող ժամանակահատվածը ներառյալ

[27] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131552

[28] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152177

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի ***N 451-Ն որոշմամբ***՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ***տարկետում է տրամադրվում գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին***[29]:

ՀՀ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի ***N 457-Ն որոշմամբ***՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ***տարկետում է տրամադրվում մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին***[30]:

Քաղաքացիները Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ***ազատվում են ՀՀ Կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն***՝ «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին» որոշման համաձայն[31]՝ մշակույթի և արվեստի, սպորտի, ինչպես նաև գիտական աստիճան ունեցող քաղաքացուն կրթության և գիտության բնագավառներում գործունեության հիմքով:

Համաձայն մեր ուսումնասիրության՝ 1998-ից 2021 թ. օգոստոսի 6-ն ընկած ժամանակահատվածում զինվորական ծառայությունից **տարկետում ստացել է 2318** քաղաքացի և **ազատվել՝ 249-ը**: Ընդ որում՝ ազատված անձանցից 30-ը պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել են միանգամից՝ առանց մինչ այդ տարկետում ստանալու: Իսկ 219 անձ զինվորական ծառայությունից ազատվել է նախկինում մեկ կամ ավելի անգամ տարկետում ստանալուց հետո:

1759 հոգի տարկետում է ստացել 1 անգամ (ընդ որում՝ նրանցից 3-ին տրամադրված տարկետումը հետագայում դադարեցվել է որոշակի սպորտաձևի հավաքական թիմի կազմում նրանց ընդգրկված չլինելու պատճառով):

558 անձի տարկետում տրամադրվել է **ավելի քան մեկ անգամ**: Մասնավորապես՝

- 2 անգամ տարկետում է ստացել **310** հոգի,
- 3 անգամ՝ **172** հոգի,
- 4 անգամ՝ **32** հոգի,
- 5 անգամ՝ **16** հոգի,
- 6 անգամ՝ **9** հոգի,
- 7 անգամ՝ **10** հոգի,

[29] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145549
[30] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135030
[31] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128187

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

- 8 անգամ՝ **6** հոգի,
- 9 անգամ՝ **3** հոգի: (տե՛ս աղյուսակ 1):

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Աղյուսակ 1. 1998-ից մինչ 2021 թ. օգոստոսի 6 ժամանակահատվածում ՀՀ Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած կամ ազատված անձանց թիվն ըստ հիմքերի եւ տարկետումների հաճախականության

Տարկետման և ազատման հիմքերը	Տարկետումների թիվն ըստ անձանց	Ազատումների թիվն ըստ անձանց	Պարտադիր զինվորական ծառայությունից տարկետումների հաճախականությունը և դրանց արդյունքում ազատումների թիվը			
			Տրամադրված տարկետումների հաճախականությունը՝ ներառյալ նույն անձին 1 և/կամ մի քանի անգամ տրամադրված տարկետումների թիվը		Տարկետումից հետո ազատում անձ	Միանգամից ազատում
Կրթական	**888**	**0**	**1019**			
			1 անգամ	796		
			2 անգամ	63		
			3 անգամ	23		
			4 անգամ	4		
			5 անգամ	2		
Հոգևորական	**404**	**190**	**1008**		**168**	**22**
			1 անգամ	133	25	22
			2 անգամ	99	53	
			3 անգամ	110	69	
			4 անգամ	22	9	
			5 անգամ	12	1	
			6 անգամ	9	6	
			7 անգամ	10	2	
			8 անգամ	6	0	
			9 անգամ	3	3	
Սպորտ	**254**	**42**	**392**		**42**	
			1 անգամ[32]	161	11	
			2 անգամ	54	12	

[32] 3 դեպքում տարկետումը դադարեցվել է որոշակի սպորտաձևի հավաքական թիմի կազմում 3 քաղաքացիների ընդգրկված չլինելու հիմքով

			3 անգամ	35	18	
			4 անգամ	4	1	
Հիմքը նշված չէ	**66**	**3**	**70**		**1**	**2**
			1 անգամ	62	1	2
			2 անգամ	4		
Մշակութային	**47**	**8**	**72**		**5**	**3**
			1 անգամ	35	2	3
			2 անգամ	5	1	
			3 անգամ	3	1	
			4 անգամ	2	1	
			5 անգամ	2		
Գիտական- կրթական	**653**	**6**	**735**		**3**	**3**
			1 անգամ	570	3	3
			2 անգամ	82		
			3 անգամ	1		
Աշխատանքային	**6**	**0**	**9**			
			1 անգամ	3		
			2 անգամ	3		
Ընդամենը	**2318**	**249**	**3305**		**206**	**28**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Զինծառայությունից 2318 տարկետում ստացած և 249 ազատված անձանց վերաբերյալ 1998 թ.-ից մինչ 2021 թ.-ի օգոստոսի 6-ը Կառավարությունն ընդունել է **721** որոշում, որից տարկետման վերաբերյալ՝ **669** որոշում, ազատման վերաբերյալ՝ **52** ***(տե՛ս աղյուսակ 2):***

Աղյուսակ 2. 1998-ից մինչ 2021 թ. օգոստոսի 6-ը ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած կամ ազատված անձանց վերաբերյալ ընդունված որոշումների թիվն ըստ տարկետման և ազատման հիմքերի

Տարկետման և ազատման հիմքերը	Տարկետման մասին որոշում	Ազատման մասին որոշում	Ընդամենը
Կրթական	446	0	**446**
Հոգևորական	37	20	**57**
Մշակութային	56	8	**64**
Սպորտ	65	16	**81**
Հիմքը նշված չէ	38	3	**41**
Գիտական-կրթական	24	5	**29**
Աշխատանքային	3	0	**3**
Ընդամենը	**669**	**52**	**721**[33]

[33] Որոշուների թիվում ներառված են բոլոր առանձին ընդունված որոշումները՝ ներառյալ մեկ անձի վերաբերյալ մի քանի անգամ կայացված առանձին որոշումների թիվը:

ՀՀ Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տրամադրված տարկետումների վերաբերյալ տվյալներ

1998-ից մինչեւ 2021 թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում **կրթությունը** շարունակելու նպատակով ընդունվել է **446** տարկետում տրամադրելու որոշում **888**[34] քաղաքացիների վերաբերյալ, որոնք սովորում են հանրակրթական, հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ:

Նշենք, որ 2021 թվականի ապրիլի 19-ին «Զինվորական ծառայության եվ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում[35] կատարվեց փոփոխություն, համաձայն որի՝ «…միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառությունը չավարտած, ավարտական կուրսում սովորող և պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացուն ՀՀ Կառավարության որոշմամբ մեկ անգամ տրվում է տարկետում՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 20 տարին լրանալու օրը» [36]: Նախկինում տարկետումը տրամադրվում էր մինչև վերջիններիս 19 տարին լրանալու օրը:

Հայ Առաքելական եկեղեցու **404** հոգևոր սպասավորների և/կամ հոգևոր ճեմարաններում ուսուցանող սաների վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման վերաբերյալ **37** որոշում:

Մշակութային (մշակույթի և արվեստի բնագավառում ունեցած բացառիկ ընդունակությունների) հիմքով **47** անձի վերաբերյալ կայացվել է տարկետման մասին **56** որոշում:

Սպորտի բնագավառում բացառիկ ունակություններ ցուցաբերած **254** անձանց վերաբերյալ ընդունվել է տարկետման մասին **65** որոշում:

Գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **653** անձի վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման մասին **24** որոշում:

[34] Այն անձինք, ովքեր նախկինում կրթական հիմքով տարկետում ստանալուց հետո նաև տարկետում են ստացել կամ ազատվել են գիտական-կրթական հիմքով, Կազմակերպության կողմից ներառվել են գիտական-կրթական հիմքով տարկետում ստացածների թվում:

[35] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152097

[36] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152087

Աշխատանքային հիմքով տարկետում տրամադրելու վերաբերյալ ընդունվել է **3** որոշում **6** անձի վերաբերյալ:

66 անձի վերաբերյալ տարկետման մասին **38** որոշումներում **չի նշվում տարկետման պատճառը**:

Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տրամադրվող ազատումների վերաբերյալ մանրամասն տվյալներ

Հայ Առաքելական եկեղեցու **190 հոգեւոր սպասավորների** եւ/կամ հոգեւոր ճեմարաններում ուսուցանող սաների վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման **վերաբերյալ 20 որոշում**: Նշված անձանցից 168-ը նախկինում ստացել է տարկետում մեկ կամ մի քանի անգամ, իսկ 22-ը միանգամից ազատվել են զինվորական ծառայությունից՝ առանց նախկինում տարկետում ստանալու:

Մշակույթի բնագավառում ցուցաբերած բացառիկ ընդունակությունների համար **8** անձի վերաբերյալ կայացվել է զինծառայությունից ազատման մասին **8** որոշում: Ընդ որում՝ նրանցից 5-ը ազատվել են զինծառայությունից մեկ կամ ավելի անգամ տարկետում ստանալուց հետո, իսկ 3 հոգին՝ միանգամից:

Սպորտի բնագավառում բացառիկ ունակություններ ցուցաբերած 4**2** անձանց վերաբերյալ ընդունվել է զինծառայությունից ազատման մասին **16** որոշում: Նրանք բոլորը նախկինում մեկ կամ մի քանի անգամ ստացել են տարկետում:

Գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **6** անձի վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման մասին 5 որոշում:

3 անձի դեպքում զինծառայությունից ազատման վերաբերյալ ընդունված **3** որոշումներում չի նշվում ազատման հիմքը: Ընդ որում՝ նրանցից 1-ը նախկինում ստացել է տարկետում, իսկ 2-ը միանգամից ազատվել են զինծառայությունից՝ առանց նախկինում տարկետում ստանալու: